https://doi.org/10.59821/18294219-2025.2-kqk05

Դիանա Կյուրեղյան
Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության դատախազ

ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ[1]

Համառոտագիր

Միջազգային իրավունքը բացարձակ արգելք է սահմանում խոշտանգումների կապակցությամբ: Հետևաբար խոշտանգման կիրառումը որևէ պարագայում չի կարող արդարացվել: Խոշտանգումն արգելված է առաջադեմ բոլոր պետությունների (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության) ներպետական օրենսդրություններով: Ընդ որում՝ նույնիսկ այն դեպքերում, երբ ներպետական օրենսդրությամբ խոշտանգումն ինքնուրույն հանցակազմով քրեականացված չէ, գոյություն ունեն քրեաիրավական այլ նորմեր կամ այլ օրենքներ, որոնց համապատասխան, խոշտանգում կատարողները պատասխանատվության են ենթարկվում: ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածով է նախատեսված խոշտանգման հանցակազմը, որը, սակայն, ձևակերպման առումով խնդրահարույց է խոշտանգման սուբյեկտի որոշման հարցում:

Հոդվածի նպատակն է՝ ընդգծել խոշտանգման հանցակազմի կարևորությունը, բացահայտել դրա էությունը նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի լույսի ներքո և վեր հանել դրա սուբյեկտին բնութագրական հատկանիշները:

Թեմայի ուսումնասիրության արդյունքները կարող են նպաստել իրավակիրառ պրակտիկայում խոշտանգման որակման հիմնախնդիրների լուծմանը, ինչպես նաև կարող են հիմք դառնալ իրավական որոշակիության համատեքստում ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածով նախատեսված խոշտանգման հանցակազմի կատարելագործմանը և, հետևաբար, դրա դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը:

Հիմնաբառեր- խոշտանգում, ֆիզիկական ուժեղ ցավ, հոգական ուժեղ տառապանք, պաշտոնատար անձ, հատուկ և հասարակ սուբյեկտ:

Ներածություն

Միջազգային իրավունքը բացարձակ արգելք է սահմանում խոշտանգումների կապակցությամբ: Հետևաբար խոշտանգման կիրառումը որևէ պարագայում չի կարող արդարացվել: Միավորված ազգերի կազմակերպությունը դատապարտել է խոշտանգումը՝ հայտարարելով, որ այն հակասում է իր Կանոնադրությանը և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքներին: Բացի

[1] Հոդվածը ներկայացվել է 26.02.2024թ., գրախոսվել է 19.03.2024թ.:

նշվածից խոշտանգման արգելքն սահմանված է նաև տարածաշրջանային կազմակերպությունների կողմից ընդունված միջազգային իրավական ակտերով: Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական կոնվեցիայով նույնպես սահմանված է խոշտանգման կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը: Ուստի հենց մատնանշված պատճառներով խոշտանգումն արգելված է առաջադեմ բոլոր պետությունների (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության) ազգային օրենսդրություններով: Չնայած այս ամենին, խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի այլ ձևերի կիրառումը դեռևս տարածում ունի ողջ աշխարհում: Մարդու իրավունքների եվրոպական կոնվեցիայի 3–րդ հոդվածով սահմանված՝ խոշտանգման և անմարդկային, նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքը Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիտարկում է կյանքի իրավունքին հավասար հարթության վրա, քանզի այն ամրագրում է մարդու արժանապատվության անխախտելիության հիմնարար հայեցակարգը: Խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի նպատակն է նվաստացնել մարդու արժանապատվությունը. դրանք նսեմացնում են մարդ արարածին՝ նրան պատճառելով ֆիզիկական կամ հոգեկան ծանր տառապանքներ: Վերոնշյալ արգելքը, իսկապես, գործում է աշխարհի բոլոր պետություններում՝ անկախ մարդու իրավունքներին վերաբերող և նման վերաբերմունքն արգելող համաձայնագրին նրանց մասնակցությունից, այն միջազգային իրավունքի «յուս կոգենս» նորմ է դարձել: Ավելին, խոշտանգման և վատ վերաբերմունքի արգելքը խիստ սակավաթիվ «բացարձակ» իրավունքներից է, այսինքն՝ երբևէ հիմնավորված չի կարող լինել դրա որևէ սահմանափակումը: Անգամ խիստ անհրաժեշտ դեպքում, երբ, օրինակ, հարաբերակցվում են հանրային և մասնավոր շահը, օրինական չէ անձին վատ վերաբերմունքի ենթարկելը: Խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի կիրառման վտանգը հատկապես մեծանում է, երբ անձը գտնվում է փակ դռների հետևում՝ զրկված է ազատությունից, ձերբակալված է, կալանքի տակ է կամ հարցաքննվում է: Այս առումով հատկապես խոցելի են այն անձինք, ովքեր անազատության մեջ գտնվելիս զրկված են արտաքին աշխարհի հետ կապից:

Ընգծելով խոշտանգման դեմ պայքարի կարևորությունը, անհրաժեշտ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածով ևս նախատեսված է խոշտանգման համար պատասխանատվություն, սակայն հանցակազմի ձևակերպումը տարակերպ մեկնաբանություններ է առաջացնում, կապված խոշտանգման սուբյեկտի հետ: Հարկ է նշել, որ խոշտանգման դեմ պայքարը էլ ավելի արդյունավետ կդառնա, եթե հստակեցվեն դրա սուբյեկտային շրջանակները, և ինչպես բխում է սույն հոդվածում կատարված վերլուծությունից, պաշտոնատար անձի դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ հատուկ սուբյեկտի հատկանիշներով չօժտված անձի կողմից որևէ անձի դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու համար պատասխանատվություն կրի պաշտոնատար անձը, իսկ հատուկ սուբյեկտ չհանդիսացող անձը ենթարկվի

քրեական պատասխանատվության այն արարքի կատարման համար, որն առկա է իր արարքում:

Այսպիսով, սույն թեմայի ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է նշված հանգամանքներով և խոշտանգման քննության արդյունավետության բարձրացման հեռանկարներով:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Սույն աշխատանքի հետազոտության նպատակն է ներկայացնել խոշտանգման կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելման հիմնախնդիրներն ու առանձնահատկությունները միջազգային իրավունքի, Մարդու իրավունքների եվրոպական կոնվեցիայի և ՀՀ քրեական օրենսգրքի համատեքստում: Նշված նպատակով էլ պայմանավորված է սույն աշխատանքի ուսումնասիրության ներքոնշյալ խնդիրները՝

1. վերլուծել խոշտանգման միջազգային իրավական կարգավորման հատկանշական գծերը,
2. ուսումնասիրել Մարդու իրավունքների եվրոպական կոնվեցիայի կարգավորման շրջանակներում խոշտանգումների արգելման առանձնահատկությունները, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները,
3. քննարկել ու վերլուծել խոշտանգումների և վատ վերաբերմունքի իրավական կարգավորման ներպետական մեխանիզմները և առկա հիմնախնդիրները:

Հետազոտության տեսական հիմքն ու կառուցվածքը: Սույն աշխատանքի տեսական հիմքն են կազմում տարբեր գիտական աշխատություններն ու հրապարակումները: Սույն աշխատանքի հետազոտության իրավական հիմքն են կազմում միջազգային իրավական ակտերը, ՀՀ ներպետական իրավական ակտերը, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատարանի նախադեպային պրակտիկան: Սույն աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. Խոշտանգման ընդհանուր բնութագիրը և միջազգային իրավական կարգավորումները

1.1 . Խոշտանգման ընդհանուր բնութագիրը

Միջազգային իրավունքը բացարձակ արգելք է սահմանում խոշտանգումների նկատմամբ, և դրանց կիրառումը չի կարող արդարացվել որևէ հանգամանքներում: Միավորված ազգերի կազմակերպությունը դատապարտել է խոշտանգումը, հայտարարելով, որ այն հակասում է իր Կանոնադրությանը և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքներին[2]: Խոշտանգումը նաև արգելված է ողջ աշխարհի ազգային օրենսդրությունների համաձայն: Նույնիսկ

[2]Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 217 Ա III, 10.12.1948:

այն դեպքերում, երբ ազգային օրենսդրության համաձայն խոշտանգումը քրեականացված չէ, գոյություն ունեն այլ օրենքներ, որոնց համաձայն, խոշտանգումներ կիրառողները պատասխանատվության են ենթարկվում: Չնայած այս ամենին, խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի այլ ձևերի կիրառումը դեռևս տարածում ունի ողջ աշխարհում[3]: Միջազգային հանրությունը մշակել է մարդկանց խոշտանգումներից պաշտպանելու չափանիշներ, որոնք կիրառելի են աշխարհի ցանկացած իրավական համակարգում: Այդ չափանիշները հաշվի են առնում գոյություն ունեցող իրավական համակարգերը և սահմանում նվազագույն այն երաշխիքները, որոնք պետք է ապահովվեն ցանկացած համակարգում: Միավորված ազգերի կազմակերպությունը երկար տարիներ շարունակ փորձել է մշակել համընդհանուր կերպով կիրառելի չափանիշներ՝ բոլոր անձանց համար խոշտանգումից կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից համապատասխան պաշտպանություն ապահովելու նպատակով: Խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխման նպատակով միջազգային իրավական մի շարք փաստաթղթերով սահմանվել է խոշտանգման հասկացությունը, որը խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխման տեսանկյունից ունի ոչ միայն գործնական, այլ նաև տեսական կարևոր նշանակություն, քանի որ հստակեցնում է այն գործողությունների շրջանակը որոնց առկայության դեպքում արարքը կարելի է որակել որպես խոշտանգում:

Խոշտանգումների բացարձակ արգելքն ամրագրված է ինչպես միջազգային պայմանագրային և սովորութային իրավունքով, այնպես էլ՝ ներպետական օրենսդրությամբ: Այն հանդիսանում է ընդհանուր միջազգային իրավունքի անառարկելի նորմ[4] (jus cogens նորմ), որն արգելում է պետությանը որևէ պարագայում վերապահումներ կատարել կամ ժամանակավորապես սահմանափակել խոշտանգումների արգելքը, նույնիսկ պատերազմի կամ դրա սպառնալիքի դեպքում, ներքին քաղաքական անկայունության կամ այլ արտակարգ իրավիճակներում[5]: «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» 1984թ. Դեկտեմբերի 10-ի կոնվենցիան խոշտանգումը բնորոշում է որպես ցանկացած գործողություն, որով որևէ անձի դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ մտավոր ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան, կամ երրորդ անձին վախեցնելու

[3] Քոնոր Ֆոլի, Պայքար խոշտանգումների դեմ, Ձեռնարկ դատավորների և դատախազների համար, թարգմանությունը Լ. Պետրոսյանի, Երևան, 2015, էջ 6:

[4] Դատախազն ընդդեմ Ֆուրունձիայի, Նախկին Հարավսլավիայի համար ստեղծված միջազգային քրեական դատարան, վճիռ առ 10 դեկտեմբերի 1998թ., գործ IT-95-17/I-T, պարբ.144:

[5] ՄԱԿ-ի Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիա, 10 դեկտեմբերի 1984թ., ուժի մեջ է մտել 1987թ. հունիսի 26-ին, ՄՊՀՀՊՏ 2008/Հատուկ թողարկում:

կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրդմամբ կամ համաձայնությամբ: Սա չի ներառում այն ցավն ու տառապանքը, որոնք բխում են օրինական պատժամիջոցներից կամ հատուկ են դրանց: Նույն հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ այդ հոդվածը չի հակասում միջազգային որևէ փաստաթղթի կամ ներպետական օրենսդրության, որոնք բովանդակում են կամ կարող են բովանդակել ավելի լայն կիրառման դրույթներ: Նշեմ, որ «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» 1984թ. դեկտեմբերի 10-ի կոնվենցիան ՀՀ կողմից վավերացվել է 1993թ. հոկտեմբերի 13-ին՝ այդպիսով դառնալով ներպետական իրավական համակարգի բաղկացուցիչ մասը:

Այսպիսով, ՄԱԿ-ի վերոնշյալ կոնվեցիան սահմանել է խոշտանգման հասկացությունը, որը ելակետային նշանակություն ունի խոշտանգման կամ այլ վատ վերաբերմունքի կանխման նպատակով ձեռնարկվող միջոցառումների իրականացման համար: Խոշտանգման կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ուսումնասիրության համար անհրաժեշտ է վերլուծության ենթարկել ՄԱԿ-ի վերոնշյալ կոնվեցիայով սահմանված հասկացությունները ու վեր հանել դրանց հատկանշական գծերը: Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի արգելքը ժողովրդավարական հասարակության հիմնարար արժեքներից մեկն է: Արդեն նշվել է աշխատանքում, խոշտանգումների արգելքը բացարձակ է, և ի տարբերություն մարդու և քաղաքացու որոշ այլ իրավունքների այն՝ չի ենթադրում որևէ բացառություն: Այսպես, այս արգելքից չի թույլատրվում շեղվել նույնիսկ արտակարգ իրավիճակներում՝ պատերազմների կամ դրանց անմիջական վտանգի ժամանակ: Դրա շրջանցումը չի կարող արդարացվել և հիմնավորվել պետության ազգային անվտանգության շահերով կամ ահաբեկչության կամ հանցավորության դեմ պայքարից թելադրվող անհրաժեշտությամբ: Խոշտանգումը և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքներն արգելվում են՝ անկախ զոհի վարքագծից: Հարկ է նշել, որ խոշտանգման և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի միջև կան որոշակի տարբերություններ: Խոշտանգումը միայն այն անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքն է, որը կիրառվում է դիտավորությամբ և պատճառում է լուրջ և դաժան տառապանքներ: Խոշտանգմանը, բացի դրան բնորոշ դիտավորության և դաժանության հատկանիշից, հատուկ է նաև նպատակայնության տարրը: Ինչպես արդեն նշվեց, խոշտանգում է համարվում այն գործողությունը, որով դիտավորությամբ անձին պատճառվում է ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից տեղեկություններ կորզելու, պատժելու կամ վախեցնելու նպատակով[6]: ՄԱԿ-ի վերոնշյալ Կոնվենցիան՝ խոշտանգման հանցա-

[6] Կարապետյան Կ., Ամիրյան Գ., Խաչիկյան Տ., Խոշտանգման գործերով քննության կազմակերպման և իրականացման ուղեցույց, Երևան, Տիգրան Մեծ, 2014, էջ 16:

կազմի առաջացման համար որպես սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ, կարևորում է նշված արարքի նպատակը: Մասնավորապես, այդ նպատակը դրսևորվում է հանցավոր այնպիսի հավակնություններ կյանքի կոչելու դիտավորությամբ, ինչպիսիք են՝

ա) տուժողից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելը,

բ) այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը,

գ) նրան կամ երրորդ անձին վախեցնելը կամ հարկադրելը,

դ) ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրդմամբ, կամ համաձայնությամբ:

Վերոնշյալ նպատակների իրականացման համար ՄԱԿ-ի խոշտանգումների վերաբերյալ կոնվեցիայով սահմանվել է իրականացվող գործողությունների շրջանակը: Մասնավորապես, գործողությունը որպես «խոշտանգում կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք» դիտելու համար բավարար է, որ այդ վերաբերմունքը ունենա խստության նվազագույն աստիճան: Այս մոտեցումը պայմանավորված է նրանով, որ խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի օբյեկտը՝ անձի ֆիզիկական, հոգեբանական և բարոյական անձեռնմխելիությունը, մարդուն ներհատուկ կարևորագույն արժեքներից մեկն է, որը ոչ մի պարագայում չի կարող ենթարկվել որևէ բացասական ազդեցության: Ելնելով վերոգրյալից՝ կարելի է առանձնացնել խոշտանգմանը վերագրվող հետևյալ հատկանիշները, որոնցով այն տարբերակվում է անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից՝

1. խոշտանգումը զոհին պատճառում է առավել ուժեղ ցավ և տառապանք,
2. խոշտանգումը դիտավորությամբ կատարվող գործողություն է,
3. խոշտանգումը հետապնդում է որոշակի նպատակ:

ՄԱԿ–ի խոշտանգման դեմ պայքարի կոնվենցիայի սահմանման համաձայն՝ պատճառված վնասը պետք է լինի «սուր ցավ կամ տառապանք», որպեսզի համարվի խոշտանգում: Ակնհայտ է, որ հնարավոր չէ օբյեկտիվ չափման ենթարկել ցավի կամ տառապանքի ծանրությունը, քանի որ դա ցանկացած դեպքում կախված է տուժողի սուբյեկտիվ զգացողությունից: Ուժեղ ցավ կամ տառապանք պատճառելու տարրի մեջ հաշվի է առնվում արարքի ազդեցությունը կոնկրետ տուժողի վրա: Նույն արարքը կարող է տարբեր կերպ ազդել տարբեր անձանց վրա՝ կախված նրանց ֆիզիկական և հոգեկան էությունից և ցավի նկատմամբ հանդուրժողության ընդհանուր մակարդակից: Դրանից բխում է նաև, որ որոշ խմբեր մյուսներից ավելի խոցելի են խոշտանգման նկատմամբ: Արարքի ծանրությունը չափվում է կոնկրետ գործի հիման վրա՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են դրա ֆիզիկական և հոգեկան ազդեցությունը վնասը կրող անձի վրա, արարքի տևողությունը և վնասը կրող անձի տարիքը, սեռը և

մշակույթը: ՄԱԿ–ի խոշտանգման դեմ պայքարի կոնվենցիայի 1–ին հոդվածում զետեղված խոշտանգման սահմանումը տարածվում է ցավի կամ տառապանքի նկատմամբ, որը կա՛մ հոգեկան է, կա՛մ՝ ֆիզիկական: Թեպետ խոշտանգման բազմաթիվ արարքներ տուժողին պատճառում են և՛ հոգեկան, և՛ ֆիզիկական ցավ կամ տառապանք, ՄԱԿ–ի խոշտանգման դեմ պայքարի կոնվենցիայում հաշվի է առնվում զգացողության այդ երկու տեսակների միջև տարբերության առկայությունը: Այնուամենայնիվ, գոյություն չունի «ֆիզիկական ցավի կամ տառապանքի» սահմանում, և խոշտանգում համարվող արարքների տեսակները պարզելու համար անհրաժեշտ է լինում ուսումնասիրել տարածաշրջանային և միջազգային տարաբնույթ մարմինների նախադեպային պրակտիկան[7]:

ՄԱԿ–ի խոշտանգման դեմ պայքարի կոնվենցիայի սահմանման մեջ պարզաբանված է, որ տվյալ արարքը խոշտանգում է, միայն եթե այն կատարվել է որոշակի նպատակների համար: Այդ նպատակները ներառում են, ի թիվս այլ նպատակների, տուժողից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն ստանալը, նրան որևէ գործողության համար պատժելը, որը կատարել կամ որի կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ ահաբեկելը կամ հարկադրելը նրան կամ երրորդ անձի, կամ որևէ տեսակի խտրականության վրա հիմնված որևէ այլ նպատակ: Մյուս կողմից՝ ոչ բոլոր նպատակներն են համապատասխանում այս կետին, քանի որ այդ պարագայում նպատակների ցանկ սահմանելն իմաստ չէր ունենա: Վերաբերելի նպատակները պետք է առնվազն որոշակի ընդհանրություն ունենան թվարկման մեջ ներառված նպատակների հետ:

Այսպիսով, ՄԱԿ-ի վերոնշյալ կոնվենցիայի սահմանումից հետևում է, որ արարքը խոշտանգում որակելու համար անհրաժեշտ է հետևյալ նվազագույն պայմանների պարտադիր առկայությունը՝

1. դիտավորությամբ մեկ ուրիշին ուժեղ մարմնական կամ մտավոր ցավ կամ տառապանք պատճառելը,
2. պետական պաշտոնյայի կողմից, նրա դրդմամբ կամ համաձայնությամբ կատարված լինելը,
3. հատուկ նպատակներ հետապնդելը, ինչպիսիք են, օրինակ, տեղեկություն կամ խոստովանություն կորզելը, պատժելը, վախեցնելը կամ խտրականության ենթարկելը:

1.2 Խոշտանգման վերաբերյալ միջազգային իրավական կարգավորումները

Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի ու պատժի արգելքն ամրագրված է ինչպես համընդհանուր բնույթ կրող, այնպես էլ՝ տարածաշրջանային մակարդակի վրա ընդունված փաստա-

[7] Ավետիսյան Վ., Սահակյան Ս., Բաղալյան Կ., Զինված ուժերում մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ դասընթացի կազմակերպման և անցկացման ուսումնական ձեռնարկ, Երևան, ԵԱՀԿ գրասենյակ, 2013, էջ 50:

թղթերում, այդ թվում՝ 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (5-րդ հոդված), 1950թ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայում (3-րդ հոդված)[8], 1966թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում (7-րդ հոդված), ինչպես նաև՝ 1984թ. Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի դեմ Միացյալ ազգերի կազմակերպության կոնվենցիայում:

Բացի նշված միջազգային իրավական փաստաթղթերից խոշտանգումների ու վատ վերաբերմունքի արգելքը ամրագրված է նաև մի շարք այլ միջազգային փաստաթղթերում: Մասնավորապես, այդպիսի փաստաթղթերից են հանդիսանում՝ Իրավակիրառ գործունեության վերաբերյալ վարքագծի կանոնագիրքը (ԻԳՎԿ)[9], Խոշտանգումից և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից դատապարտյալների և կալանավորվածների պաշտպանության մեջ առողջապահական անձնակազմի, մասնավորապես, բժիշկների դերին համապատասխան բժշկական էթիկայի սկզբունքները (Բժշկական էթիկայի սկզբունքները) և Ազատությունից զրկված անձանց հետ վարվեցողության հիմնական սկզբունքները (ԱՎՀՍ)[10] և այլն:

Խոշտանգումների դեմ պայքարելու գործընթացում կարևոր նշանակություն ունի նաև Միջազգային քրեական դատարանը: Մասնավորապես, 1998 թվականի հուլիսի 17-ին ընդունված Հռոմի պայմանագրով հիմնադրվեց մշտական հիմունքներով գործող Միջազգային քրեական դատարանը՝ դատապարտելու ցեղասպանության, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների և պատերազմական հանցագործությունների համար պատասխանատվության ենթակա անձանց:

Հռոմի պայմանագրում «խոշտանգումը» սահմանվում է որպես «արգելանքի տակ գտնվող անձի կամ մեղադրյալի, վերահսկողության տակ գտնվող անձի նկատմամբ դիտավորությամբ մարմնական կամ մտավոր ուժեղ ցավի կամ տառապանքի պատճառում»:

Խոշտանգումների դեմ պայքարելու ոլորտում կարևոր նշանակություն ունեն նաև տարածաշրջանային կազմակերպությունները: Մասնավորապես, տարածաշրջանային մարմինները նույնպես նպաստել են խոշտանգումների կանխարգելման չափանիշների մշակմանը: Այդ մարմինները ներառում են՝ Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեն, Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովը, Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, Խոշտանգումների

---

[8] Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա, 1950թ.:

[9] Իրավակիրառ գործունեության վերաբերյալ վարքագծի կանոնագիրք, Գլխավոր Ասամբլեայի 34/169 բանաձևը:

[10] Ազատությունից զրկված անձանց հետ վարվեցողության հիմնական սկզբունքները, ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 43/173 բանաձևը:

կանխարգելման եվրոպական կոմիտեն և Մարդու իրավունքների աֆրիկյան հանձնաժողովը:

ԳԼՈՒԽ 2. Խոշտանգման վերաբերյալ ներպետական իրավական կարգավորումներն ու հիմնախնդիրները

2.1. Խոշտանգման վերաբերյալ ներպետական իրավական կարգավորումները

ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Պաշտոնատար անձի կողմից կամ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ որևէ անձի դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը՝ այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու նպատակով կամ այն արարքի համար պատժելու նպատակով, որն այդ կամ երրորդ անձը կատարել է կամ որի կատարման մեջ կասկածվում կամ մեղադրվում է, ինչպես նաև այդ կամ երրորդ անձին վախեցնելու կամ որևէ արարք կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով»:

Տեսական գրականության մեջ բազմիցս քննարկվել են խոշտանգման առանձնահատկությունները: Մասնավորապես, Ա.Ֆ. Իստոմինը գտնում է, որ խոշտանգումը պետք է տեղ գտնի անձի դեմ ուղղված հանցագործությունների շարքում, ընդլայնելով հանցակազմի բովանդակությունը և համապատասխանեցնելով ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիայով (այսուհետ նաև՝ Խոշտանգման դեմ կոնվենցիա) տրված սահմանմանը[11]: Հակառակ այս կարծիքին բազմաթիվ հեղինակներ խոշտանգումը դասում են պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների շարքին և գտնում են, որ դա կբխի վավերացրած միջազգային փաստաթղթերի նորմատիվ պահանջներից: Մենք համակարծիք ենք հեղինակների այն խմբի հետ, ովքեր գտնում են, որ խոշտանգումը պետք է դասել պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների շարքին: Ասվածը հիմնավորելու համար պետք է նշել, որ գործող օրենսդրական կարգավորման պարագայում փորձ է կատարվել խոշտանգման հանցակազմը նմանեցնել կոնվենցիոնալ ձևակերպմանը, որտեղ որպես պարտադիր տարր է դիտարկվում տվյալ հանցակազմի իրականացմանը պետական մարմնի ներգրավվածությունը (այն կարող է իրականացվել ինչպես անձամբ պետական մարմնի կողմից, այնպես էլ նրա իմացությամբ), ինչն էլ ենթադրում է հատուկ սուբյեկտի առկայություն՝ ի դեմս հանրային ծառայողի: Այսինքն՝ առավել կոնկրետ տվյալ հանցակազմը պետական մարմնի ներգրավվածությամբ իրականացվող հանցակազմ է, որն էլ

[11] Истомин А.Ф. Пытка преступление против личности // Журнал Российского права. 2000. №5-6. էջ 61-65.

հետևաբար պետք է տեղ գտնի հանրային ծառայության շահերի դեմ ուղղված հանցագործությունների գլխում: Հանցագործության օբյեկտի հետ կապված ևս առկա է տարակարծություն մասնագիտական գրականությունում: Չնայած այն հանգամանքին, որ հեղինակներից շատերը համակարծիք են հանցագործության օբյեկտի վերաբերյալ՝ գտնելով, որ այդպիսին է անձի առողջությունը: Յու. Պեստերովան գտնում է, որ խոշտանգման օբյեկտը անձի առողջությունն է, սակայն, եթե այն ուսումնասիրվում է որպես կոնվենցիոնալ հասկացություն, ապա հանցագործության օբյեկտ են դիտվում այլ արժեքներ, մասնավորապես, արդարադատության շահը և պետական ծառայությունը[12]:

Վ. Գ. Վենյամինովը առաջարկում է որպես խոշտանգման հիմնական, անմիջական օբյեկտ դիտել անձի պատիվն ու արժանապատվությունը, որպես լրացուցիչ օբյեկտ՝ անձի անձեռնմխելիությունը, անձի առողջությունը[13]: Կարծում ենք, տվյալ հանցագործությունը հանդիսանալով հանրային ծառայության շահերի դեմ ուղղված հանցագործություն որպես կանոն, միշտ վնասում է պետական իշխանության հեղինակությունը միաժամանակ վտանգելով անձի կյանքը, առողջությունը, ինչպես նաև արժանապատվությունը: Այսպիսով, տվյալ հանցագործության օբյեկտն առավել ամբողջական կլինի, եթե նշեմ, որ որպես հիմնական, անմիջական օբյեկտ դիտարկվում է պետական իշխանության հեղինակությունը, իսկ որպես լրացուցիչ օբյեկտ հանդիսանում են մարդու կյանքը, առողջությունը, պատիվը, արժանապատվությունը:

Հանցագործության օբյեկտիվ կողմը երկընտրելի է, որը կարող է դրսևորվել՝ ա) ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելով, բ) հոգեկան ուժեղ տառապանք պատճառելով: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ հնարավոր է նաև դրանց միաժամանակյա առկայությունը: Մասնավորապես, խոսքը վերաբերում է հատկապես այն դեպքերին, երբ պատճառվում է ֆիզիկական ուժեղ ցավ: Այդ ցավի ուժգնությունը, ինչպես նաև դրա տևականությունը կարող են անձի մոտ առաջացնել նաև հոգեկան տառապանք: Անձի նկատմամբ իրականացվող յուրաքանչյուր ոտնձգություն առաջացնում է ֆիզիկական կամ հոգեկան ցավ: Սակայն խոշտանգումը տարբերվում է անձի նկատմամբ իրականացվող ցանկացած ոտնձգությունից նրանով, որ այն պատճառում է առավել շատ տանջանք և ցավ: Անհրաժեշտություն է առաջանում բացահայտել թե ինչ է իրենից ենթադրում ֆիզիկական կամ հոգեկան տառապանքը: Արարքին ճիշտ գնահատական տալու համար առաջնային է համարվում «տառապանք» հասկացության բացահայտումը, քանի որ այն սուբյեկտիվ կատեգորիա է: Տառապանքը գնահատողական հասկացություն է և հոգեբանության մեջ այն բացատրվում է որպես զգացողություն, որը արտահայտում է մարդու բացասական ապրումներից առաջացող էմոցիոնալ վիճակը, որն ի հայտ է գալիս հոգեկան խեղումների ազդեցության ներքո և խորապես ազդում է

[12] Пестерева Ю. С., К вопросу о понятии пытки // Новая редакция УК России: попытка теоретического осмысления: Материалы межвуз. науч. конф. (февраль 2004). – Омск: Омская академия МВД России, 2004, с. 76:

[13] Егоров В. С., Понятие состав преступления в уголовном праве: учеб. пособие, М., 2001, с. 19:

նրա առողջական վիճակի, տրամադրության և այլ արժեքների վրա: Ցավը և տառապանքը միմյանց անմիջականորեն կապված զգացողություններ են: Վ. Ռոմանովը ֆիզիկական տառապանքը բացահայտում է որպես մարդուն հասցված ֆիզիկական ցավ, տանջանք, մարմնական վնասվածքներ, տարբեր տեսակի կտտանքներ և այլն, ինչն իր հերթին կարող է անձին հասցված բարոյական տառապանքների արդյունք լինել: Հեղինակի նման կարծիքի հետ կարելի է համաձայնվել մասնակիորեն. կարծում ենք, որ ֆիզիկական տառապանքն անմիջականորեն կապված է անձին ֆիզիկական ցավ պատճառելու հետ, ինչը կարող է արտահայտվել նրան մարմնական վնասվածքներ հասցնելու, նրա առողջության վրա այլ կերպ ներգործելու ձևով, սակայն այն չի կարող ընդգրկել բարոյական տառապանքը, որն առավել հատուկ է հոգեկան տառապանքին: Օբյեկտիվ կողմը նկարագրելիս հատկապես առանցքային է համարվում հանցագործության ավարտման պահը: Օրենսդրությամբ գործածվում է «ֆիզիկական ուժեղ ցավ» կամ «հոգեկան ուժեղ տառապանք» հասկացությունները, որոնք, ինչպես արդեն նշվել է գնահատողական կատեգորիաներ են: Գիտնականների շրջանում այս հարցի կապակցությամբ նույնպես բացակայում է միասնական մոտեցումը: Մի շարք հեղինակներ սույն հանցագործության օբյեկտիվ կողմից ելնելով գտնում են, որ հիշյալ հանցագործությունը նյութական է:

Վ. Պ. Կուռոչկինը գտնում է, որ խոշտանգումը կառուցված է նյութական-ձևական հանցակազմի ձևով, քանի որ օբյեկտիվ կողմը բացի հոգեկան բռնությունից նախատեսում է նաև որպես հանցավոր գործունեության ձև՝ ծեծը կամ առողջությանը թեթև վնաս պատճառելը: Ըստ հեղինակի՝ հանցագործությունը համարվում է ավարտված ֆիզիկական կամ հոգեկան տառապանք պատճառելու պահից՝ անկախ առողջությանը վնաս հասցնելու կամ չհասցնելու հանգամանքից[14]:

Իսկ Ա. Ն. Սիմինենկոն նշում է, որ խոշտանգումը կառուցված է ձևական հանցակազմով և ի տարբերություն առողջությանը վնաս պատճառելու հանցակազմերի, խոշտանգման համար կարևոր է ոչ թե հետևանքի ի հայտ գալը (կոնկրետ առողջությանը վնաս հասցնելու ձևով), այլ՝ գործողությունը՝ ֆիզիկական կամ հոգեկան տառապանք հասցնելը: Քննարկվող հանցակազմի ավարտման պահը ճիշտ նկարագրելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել հանցակազմի դիսպոզիցիան, ինչն էլ արտահայտվում է ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք հասցնելու ձևով: Այսինքն՝ օրենսդրական նման ձևակերպումից կարելի է եզրակացնել, որ հիշյալ հանցակազմի գոյության համար պարտադիր տարր է համարվում տուժողին նման վնաս հասցնելը, ինչը կարող է արտահայտվել տուժողին ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք հասցնելու ձևով: Տվյալ հանցակազմի ավարտման համար պարտադիր է նման ցավի պատճառումը, այլապես արարքն ավարտված չի կարող համարվել: Այլ կերպ ասած՝ հիշյալ հանցակազմը նախատեսվում է նյութական հանցակազմի

[14] Курочкин В. П., Уголовно-правовая характеристика истязания. Сборник научных трудов профессорско-преподавательского состава по итогам отчетов кафедр по НИР за 2012, № 7, էջ 167-168:

ձևով: Իհարկե, հասկանալի է, որ գործնականում կարող են առաջանալ այնպիսի խնդիրներ, թե ինչպես պետք է որակվեն այն դեպքերը, երբ անձին նման ցավ կամ տառապանք չի պատճառվում, կամ հանցավորն իր նպատակին չի հասնում տուժողի հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններից ելնելով: Նման դեպքերում հասկանալի է, որ արարքն ավարտված հնարավոր չէ համարել, որովհետև հանցակազմի ավարտման համար անհրաժեշտ է, որ տուժողին պատճառվի ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք: Այսինքն՝ հիշյալ հանցագործությունն ավարտված համարելու համար բավարար չէ միայն հանցավորի դիտավորությունն ու նպատակը, կարևոր է նաև դրա վերջնարդյունքին հասնելը, մասնավորապես, հետևանք՝ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք առաջացնելը:

Ինչ վերաբերում է սուբյեկտիվ հատկանիշներին, հարկ է նշել, որ հեղինակների մոտեցումները տարբեր են խոշտանգման սուբյեկտիվ կողմի վերաբերյալ: Պ. Կրիվոշեինը նշում է, որ խոշտանգման սուբյեկտիվ կողմը կարող է իրականացվել բացառապես կանխամտածված ձևով, այսինքն՝ միայն ուղղակի դիտավորությամբ[15]: Իսկ որոշ հեղինակների կարծիքով այն կարող է իրականացվել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ[16]: Չնայած այն հանգամանքին, որ օրենսդրությունը չի առանձնացնում թե կոնկրետ ինչ դիտավորությամբ կարող է կատարվել խոշտանգումը և գործածում է միայն «դիտավորություն» արտահայտությունը, իմ կարծիքով, սույն հանցագործության սուբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել բացառապես ուղղակի դիտավորությամբ: Այսինքն՝ անձը գիտակցում է իր արարքի այն փաստական հանգամանքները, որոնք տվյալ հանցակազմի հատկանիշ են: Սույն արարքը կատարվում է ոչ միայն հիշյալ հետևանքների առաջացման համար, այլև այն որոշակի այլ նպատակներ է հետապնդում: Այլ կերպ՝ սույն հանցակազմի սուբյեկտիվ կողմը լիարժեք կհամարվի միայն այն ժամանակ, եթե այն կատարվում է կոնկրետ նպատակով, որը պարտադիր է արարքը խոշտանգում որակելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածի տառացի մեկնաբանությունից բխում է, որ ի տարբերություն հանրային ծառայության շահերի դեմ ուղղված այլ հանցագործությունների, սույն հանցագործության սուբյեկտ կարող է համարվել ոչ միայն պաշտոնատար անձը, այլ՝ քրեական պատասխանատվության տարիքի հասած ցանկացած այլ անձ, միայն մի պայմանով, եթե վերջինս գործել է տվյալ պաշտոնատար անձի դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ:

2.2. Խոշտանգման որակման հիմնախնդիրները.

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 450-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում խոշտանգման՝ պաշտոնատար անձի կողմից կամ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ որևէ անձի դիտավորությամբ ֆիզիկական

[15] Кривошеин П., Пытка: понятие и признаки // Уголовное право, 2005, № 5, էջ 41:

[16] Кабанов П. Н., Уголовная ответственность за побои и истязания: автореф. дис. канд. юрид. наук. М., 2006, էջ 8:

ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը՝ այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու նպատակով կամ այն արարքի համար պատժելու նպատակով, որն այդ կամ երրորդ անձը կատարել է կամ որի կատարման մեջ կասկածվում կամ մեղադրվում է, ինչպես նաև այդ կամ երրորդ անձին վախեցնելու կամ որևէ արարք կատարելուն կամ կատարումից ձեռնպան մնալուն հարկադրելու նպատակով կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով:

Ինչպես նշվեց աշխատանքում, Մարդու իրավունքների եվրոապական դատարանը հարուստ է խոշտանգման վերաբերյալ նախադեպային որոշումներով, որոնցում, հիմնականում, առանձնացվում են հանցակազմի այն հիմնական հատկանիշները, որոնք հիմք են խոշտանգումն այլ հանցակազմերից տարանջատելու համար: Շեշտը դրված է կատարվող արարքի նպատակի վրա, որն է՝ դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելով՝ այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալը կամ այն արարքի համար պատժելը, որն այդ կամ երրորդ անձը կատարել է կամ որի կատարման մեջ կասկածվում կամ մեղադրվում է, ինչպես նաև այդ կամ երրորդ անձին վախեցնելը կամ որևէ արարք կատարելուն կամ կատարումից ձեռնպան մնալուն հարկադրելը, և սուբյեկտի վրա, որը միայն պաշտոնատար անձն է:

Սույն հոդվածի մեկնաբանությունից բխում է, որ խոշտանգման համար քրեական պատասխանատվության ենթակա է պաշտոնատար անձը կամ այն անձը, ով գործել է պաշտոնատար անձի դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ: Հարց է առաջանում, թե արդյոք պաշտոնատար անձ չհանդիսացող, սակայն վերջինիս դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ խոշտանգման օբյեկտիվ կողմը կատարած անձը ենթակա է պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգքրի 450-րդ հոդվածով նախատեսված արարքի կատարման համար, արդյոք տվյալ պարագայում նա հանդես է գալիս որպես կատարող:

Ինչպես արդեն նշվել է աշխատանքում, օրեսնդրորեն կազմակերպման և դրդչության ինստիտուտները ընդգրկվել են խոշտանգման հանցակազմում: Այսպիսի ձևակերպման պայմաններում, եթե պաշտոնատար անձը դրդի պաշտոնատար անձ չհանդիսացող որևէ անձի կատարել խոշտանգման օբյեկտիվ կողմը, ապա խնդիր կառաջանա նրա արարքի որակման և քրեական պատասխանատվության ենթարկելու հետ կապված: ՀՀ քրեական օրենսգրքի 46-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է՝ կատարող է համարվում այն անձը, որն անմիջականորեն կատարել է հանցանքը կամ դրա կատարմանը մասնակցել է այլ անձի (համակատարողի) հետ համատեղ, ինչպես նաև հանցանքը կատարել է այնպիսի անձի օգտագործելու միջոցով, որն օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության կամ ենթակա չէ քրեական պատասխանատվության տվյալ հանցագործության համար որպես կատարող կամ հանցանքը կատարել է անզգուշությամբ: Պաշտոնատար անձը, երբ այպիսին չհամարվող անձին դրդում է կատարել խոշտանգման օբյեկտիվ կողմը, կամ կազմակերպում է այդպիսի

հանցանքի կատարումը, պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածով նախատեսված հանցանքը որպես կատարող կատարելու համար, քանի որ տվյալ պարագայում պաշտոնատար անձը, չնայած այն հանգամանքին, որ անձամբ չի կատարել ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածով նախատեսված հանցանքը, դրա կատարման համար օգտագործել է այնպիսի անձի, որը ենթակա չէ քրեական պատասխանատվության տվյալ հանցագործության համար որպես կատարող:

Այլ է հարցը, թե այդ պարագայում քրեական օրենսգրքի որ հոդվածով նախատեսված հանցանքի կատարման համար պատասխանատվության կենթարկվի պաշտոնատար անձ չհանդիսացող անձը:

ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է՝ եթե սույն օրենսգրքի Հատուկ մասի հատուկ սուբյեկտով հանցագործության օբյեկտիվ կողմը կատարել է հատուկ սուբյեկտի հատկանիշներով չօժտված անձը, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված այն հանցագործության համար, որի հատկանիշներն առկա են նրա արարքում:

ՀՀ քրեական օրենսգրքի 46-րդ հոդվածի 7-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ օժանդակող է համարվում նաև այն անձը, որը հատուկ սուբյեկտի դրդմամբ կատարել է հատուկ սուբյեկտով հանցագործության օբյեկտիվ կողմը, որի սուբյեկտ ինքը չի համարվում, կամ հատուկ սուբյեկտի հետ համատեղ մասնակցել է հատուկ սուբյեկտով հանցագործության օբյեկտիվ կողմի կատարմանը, եթե բացակայել են սույն օրենսգրքի 48-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ կամ 6-րդ մասով նախատեսված պայմանները, որոնց ուժով անձը հատուկ սուբյեկտով հանցագործության օժանդակող չի համարվում:

Այսինքն, այն անձը, որը օժտված չէ հատուկ սուբյեկտին՝ պաշտոնատար անձին բնորոշ հատկանիշներով, քրեական պատասխանատվության կենթարկվի քրեական օրենսգքրի Հատուկ մասով նախատեսված այն հանցագործության համար, որի հատկանիշները առկա կլինեն նրա արարքում:

Այսպես, գտնում ենք, որ պաշտոնատար անձ չհանդիսացող սուբյեկտի կողմից պաշտոնատար անձի դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ խոշտանգման օբյեկտիվ կողմը կատարելու դեպքում, ՀՀ քրեական օրենսգրքի 46-րդ հոդվածի կիրառմամբ, քրեական պատասխանատվություն այդ անձի համար կարող է վրա հասնել քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածով նախատեսված հանցագործության կատարմանը օժանդակելու համար:

Խոշտանգման որակման որոշակի բարդություններ կարող են առաջանալ նաև ներպետական օրենսդրությունում դրա հասկացության բացակայության հետ կապված: Այդպիսի հասկացության բացահայտումը և տարանջատումը անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կարևոր է նաև իրավական որոշակիության տեսանկյունից:

Ինչպես գիտենք, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելումը ՀՀ ներպետական օրենսդրությամբ

իրավական կարգավորման ենթարկված չէ: Նշված հիմնախնդիրը որոշակի առումով կարգավորված է միջազգային իրավական ակտերով, սակայն վատ վերաբերմունքի (անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելումը) ու խոշտանգման տարբերակումը ունի կարևոր նշանակություն: Մասնավորապես, Խոշտանգումն այլ (դաժան), անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքից տարբերակելն ունի իրավական հետևանքներ: Մասնավորապես, խոշտանգման արգելքը յուս կոգենս նորմ է, ինչպես նշվեց, մինչդեռ վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքը միջազգային իրավունքի համաձայն միևնույն իրավական կարգավիճակը չունի: Այնուամենայնիվ, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքը նույնպես բացարձակապես արգելված է, և այդ արգելքից որևէ շեղում հնարավոր չէ (ՄԻԵԿ–ի 15–րդ հոդված): Խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի առումով պետության պարտավորությունների տարբերակումը կարելի է գտնել ՄԱԿ–ի խոշտանգման դեմ պայքարի կոնվենցիայում: Օրինակ՝ վերջինիս միացած պետությունները պարտավոր են որպես այդպիսին քրեականացնել խոշտանգումը, այսինքն՝ իրենց քրեական օրենսգրքում ներառել խոշտանգումը որպես առանձին հանցատեսակ, սակայն նույն պարտավորությունը գոյություն չունի վատ վերաբերմունքի այլ ձևերի առումով (ՄԱԿ-ի խոշտանգման դեմ պայքարի կոնվենցիայի 4-րդ հոդված): Այնուամենայնիվ, առնվազն անմարդկային վերաբերմունքի ձևերի մեծ մասը, օրինակ՝ մարմնական վնասվածք պատճառելը կամ իշխանության չարաշահումը, ցանկացած պետությունում հանցագործություն է: Մյուս կողմից՝ ՄԱԿ-ի խոշտանգման դեմ պայքարի կոնվենցիայի մասնակից պետություններն պարտավոր են իրականացնել խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի վերաբերյալ բողոքների արդյունավետ քննություն:

Սահմանման բացակայության պատճառով վերջին տարիներին մշակվել են տարբերակման տարաբնույթ մեթոդներ: Ամենահաճախ կիրառվող հայեցակարգային մոտեցումը ՄԻԵԴ-ի մշակածն է, որը հիմնականում կախված է ցավի ծանրությունից: Ireland-ն ընդդ. Միացյալ Թագավորության գործով ՄԻԵԴ-ը վճռեց, որ Բրիտանական անվտանգության ուժերի կողմից Հյուսիսային Իռլանդիայում կիրառված հարցաքննության հինգ հնարքների համակցությունն անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունք է եղել, սակայն ոչ խոշտանգում ՄԻԵԿ-ի իմաստով՝ ի տարբերություն Հանձնաժողովի կողմից նախկինում կայացված որոշման: ՄԻԵԴ-ն իր դիրքորոշումը պատճառաբանեց հետևյալ կերպ՝ խոշտանգման և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի տարբերակումը հիմնականում պայմանավորված է եղել պատճառված տառապանքի ծանրությամբ: «Խոշտանգում» եզրույթը հատուկ խարան է վերագրում դիտավորյալ անմարդկային վերաբերմունքին, որը շատ ծանր և դաժան տառապանք է պատճառում: Այնուամենայնիվ, այս տարբերակումն անթերի չէ, քանի որ դրանով նախատեսվող բաժանարար գիծն իրավական հետևանքներ է առաջացնում՝

ելնելով սուբյեկտիվ զգացողությունից, որը քանակական չափման ենթակա չէ, այն է՝ տուժողի կողմից ցավը զգալու ծանրությունից[17]:

Խոշտանգման հասկացությունը սահմանված է Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվեցիայում, որի համաձայն՝ խոշտանգումը բնորոշում է որպես ցանկացած գործողություն, որով որևէ անձի դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ մտավոր ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան, կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրդմամբ կամ համաձայնությամբ:

«Խոշտանգում» և «անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք» հասկացությունների միջև սահմանը հստակ չէ, և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր հանգամանքները: Շատ դեպքերում անմարդկային վերաբերմունքը նաև նվաստացնող վերաբերմունք է: Չնայած անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի միջև հստակ տարբերության բացակայությանը՝ Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը և դատարանը փորձել են տալ դրանց սահմանումները և առանձնացնել դրանց տարբերակիչ հատկանիշները: Հանձնաժողովի սահմանման համաձայն՝ «անմարդկային վերաբերմունք» հասկացությունը ներառում է այնպիսի վերաբերմունք, որով դիտավորությամբ պատճառվում է ուժեղ ֆիզիկական կամ հոգեկան տառապանք: Վերաբերմունքը կամ պատիժը կարող է նվաստացնող համարվել, եթե այլոց առջև ստորացնում է անձին կամ նրան ստիպում է գործել իր կամքին կամ գիտակցությանը հակառակ»: Ըստ դատարանի սահմանման՝ «Նվաստացնող կարող է համարվել այն վերաբերմունքը, որը զոհերի մեջ առաջացնում է վախի, բարկության և ստորադասության զգացում, ինչը կարող է ստորացնել նրանց և կոտրել նրանց ֆիզիկական կամ բարոյական դիմադրողականությունը»: Խոշտանգման դեպքում անհրաժեշտ է ապացուցել կոնկրետ նպատակի առկայությունը, իսկ վերաբերմունքի այլ ձևերի դեպքում նման պահանջ չկա: Անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք կարող է առաջանալ գործողություններ չձեռնարկելու, ոչ թե դիտավորյալ կատարված գործողությունների հետևանքով:

Եզրակացություն

Կատարելով համապատասխան ուսումնասիրություն, եկել ենք այն եզրահանգման, որ ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածով նախատեսված

[17] Ավետիսյան Վ., Սահակյան Ս., Բաղալյան Կ., Զինված ուժերում մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ դասընթացի կազմակերպման և անցկացման ուսումնական ձեռնարկ, Երևան, ԵԱՀԿ գրասենյակ, 2013, էջ 52:

խոշտանգման հանցակազմը համապատասխանում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից սահմանված պահանջներին և չափանիշներին, բացի սուբյեկտի վերաբերյալ անսիտակ ձևակերպումից, որը կարող է տարակերպ մեկնաբանվել: Մասնավորապես, հոդվածի դիսպոզիցիան կարող է մեկնաբանվել այնպես, որ խոշտանգման սուբյեկտ հանդիսանա նաև հատուկ սուբյեկտի հատկանիշներով չօժտված, բայց վերջինիս դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ խոշտանգման գործողություններ կատարող անձը, ինչը չի բխում կոնվենցիոնալ պահանջներից:

Հետևաբար, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումների, ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ սուբյեկտի, վերջինիս կողմից կատարվող հանցագործություններին հանցակցելու և հանցակցության վերաբերելի կարգավորումների լույսի ներքո գտնում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածով նախատեսված հանցանքը կարող է կատարվել միայն հատուկ սուբյեկտի՝ պաշտոնատար անձի կողմից, իսկ հատուկ սուբյեկտի հատկանիշներով չօժտված անձի կողմից այդպիսի արարք կատարելու դեպքում, վերջինս կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքի հանցակիցների, հատուկ սուբյեկտի և հատուկ սուբյեկտի կողմից կատարվող հանցագործություններին հանցակցելու վերաբերելի նորմերի կիրառմամբ:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 217 Ա III, 10.12.1948:
The Universal Declaration of Human Rights, 217 A III, 10.12.1948.

2. Քոնոր Ֆոլի, Պայքար խոշտանգումների դեմ, Ձեռնարկ դատավորների և դատախազների համար, թարգմանությունը Լ. Պետրոսյանի, Երևան, 2015, էջ 6:
Conor Foley, Combating Torture: A Manual for Judges and Prosecutors, translated by L. Petrosyan, Yerevan, 2015 p. 6.

3. Դատախազն ընդդեմ Ֆուրունձիայի, Նախկին Հարավսլավիայի համար ստեղծված միջազգային քրեական դատարան, վճիռ առ 10 դեկտեմբերի 1998թ., գործ IT-95-17/I-T, պարբ. 144:
Prosecutor v. Furundzia,The International Criminal Tribunal for the former Yugoslavia, December 10, 1998, the case is that-95-17/ I-t, paragraph 144.

4. ՄԱԿ-ի Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիա, 10 դեկտեմբերի 1984թ., ուժի մեջ է մտել 1987թ. հունիսի 26-ին, ՄՊՀՀՊՏ 2008/Հատուկ թողարկում:
The United Nations Convention against Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment, December 10, 1984, entered into legal force in 1987, June 26.

5. Կարապետյան Կ., Ամիրյան Գ., Խաչիկյան Տ., Խոշտանգման գործերով քննության կազմակերպման և իրականացման ուղեցույց, Երևան, Տիգրան Մեծ, 2014, էջ 16:
Karapetyan K., Amiryan G., Khachikyan T., Guidelines for the organization and conduct of investigations in cases of torture, Yerevan, Tigran Mets, 2014, p. 16.

6. Ավետիսյան Վ., Սահակյան Ս., Բադալյան Կ., Զինված ուժերում մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ դասընթացի կազմակերպման և անցկացման ուսումնական ձեռնարկ, Երևան, ԵԱՀԿ գրասենյակ, 2013, էջ 50:
Avetisyan V., Sahakyan S., Badalyan K., Manual for teaching human rights in the armed forces, Yerevan, OSCE Office, 2013, p. 50.

7. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա, 1950թ.:
European Convention on Human Rights,1950.

8. Իրավակիրառ գործունեության վերաբերյալ վարքագծի կանոնագիրք, Գլխավոր Ասամբլեայի 34/169 բանաձևը:
Code of conduct for law enforcement officials, General Assembly resolution 34/169.

9. Ազատությունից զրկված անձանց հետ վարվեցողության հիմնական սկզբունքները, ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 43/173 բանաձևը:
Body of Principles for the Protection of All Persons under Any Form of Detention or Imprisonment, UN General Assembly Resolution 43/173.

10. Истомин А.Ф. Пытка преступление против личности // Журнал Российского права. 2000. №5-6. էջ 61-65.

Istomin A.F. Torture is a crime against the person // Journal of Russian Law. 2000. No.5-6. pp. 61-65.

11. Пестерева Ю. С., К вопросу о понятии пытки // Новая редакция УК России: попытка теоретического осмысления: Материалы межвуз. науч. конф. (февраль 2004). – Омск: Омская академия МВД России, 2004, էջ 76:

Pestereva Yu. S., On the question of the concept of torture // New edition of the Criminal Code of Russia: an attempt at theoretical understanding: Materials of the inter-university. scientific conference (February 2004). Omsk: Omsk Academy of the Ministry of Internal Affairs of Russia, 2004, p. 76.

12. Егоров В. С., Понятие состав преступления в уголовном праве: учеб. пособие, М., 2001, էջ 19:

Egorov V. S., The concept of corpus delicti in criminal law: the manual, M., 2001, p. 19.

13. Курочкин В. П., Уголовно-правовая характеристика истязания. Сборник научных трудов профессорско-преподавательского состава по итогам отчетов кафедр по НИР за 2012, № 7, էջ 167-168:

Kurochkin V. P., Criminal law characteristics of torture. Collection of scientific works of the teaching staff based on the results of the research of the Department of Research and Development for 2012, No. 7, pp. 167-168.

14. Кривошеин П., Пытка: понятие и признаки // Уголовное право, 2005, № 5, էջ 41:

Krivoshein P. Understanding and signs // Criminal law, 2005, No. 5, p. 41.

15. Кабанов П. Н., Уголовная ответственность за побои и истязания: автореф. дис. канд. юрид. наук. М., 2006, էջ 8:

Kabanov P. N., Criminal liability for beatings and torture: abstract of the thesis, cand. Jurid. M., 2006, p. 8.

16. Ավետիսյան Վ., Սահակյան Ս., Բադալյան Կ., Զինված ուժերում մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ դասընթացի կազմակերպման և անցկացման ուսումնական ձեռնարկ, Երևան, ԵԱՀԿ գրասենյակ, 2013, էջ 52:

Avetisyan V., Sahakyan S., Badalyan K., Manual for teaching human rights in the armed forces, Yerevan, OSCE Office, 2013, p. 52.

Diana Kyureghyan
Prosecutor of the Prosecutor's Office of administrative district Malatia-Sebastia of Yerevan

CRIMINAL ISSUES OF TORTURE[18]

Abstract

International law establishes an absolute ban on torture. Therefore, the use of torture cannot be justified under any circumstances. Torture is prohibited by the domestic legislation of all developed countries (including the Republic of Armenia). Moreover, even in cases where torture is not classified as a separate crime by national legislation, there are other criminal law norms or other laws according to which perpetrators of torture are brought to justice. Article 450 of the Criminal Code of the Republic of Armenia concerns the crime of torture. However, the wording of the article may pose challenges in determining the subject of torture.

The purpose of the article is to emphasize the importance of the crime of torture, to reveal its essence also in the context of the case law of the European Court of Human Rights and to highlight the characteristic features of its subject.

The results of the research on the topic can contribute to solving problems related to the qualification of torture in law enforcement practice, and can also become the basis for improving the corpus delicti of torture provided for in Article 450 of the Criminal Code of the Republic of Armenia in the context of legal certainty and, consequently, increasing the effectiveness of combating it.

Keywords: torture; severe physical pain; severe mental suffering; the official; special and ordinary subjects

[18] The article was presented on 26.02.2024 and was reviewed on 19.03.2024.

Диана Кюрегян
Прокурор прокуратуры административного округа Малатия-Себатия города Ереван

УГОЛОВНО-ПРАВОВЫЕ ВОПРОСЫ ИСТЯЗАНИЯ[19]

Абстракт

Международное право устанавливает абсолютный запрет на истязание. Следовательно, истязание ни при каких обстоятельствах не может быть оправдано. Истязание запрещено внутренним законодательством всех развитых государств (включая Республику Армения). Более того, даже в тех случаях, когда пытки не квалифицируются как самостоятельное преступление в национальном законодательстве, существуют другие уголовно-правовые нормы или другие законы, в соответствии с которыми лица, совершающие истязание, привлекаются к ответственности. Статья 450 Уголовного кодекса РА предусматривает уголовную ответственность за истязание, что, однако, проблематично с точки зрения формулировки при определении субъекта истязания.

Цель статьи-подчеркнуть важность состава преступления истязания, раскрыть его сущность также в свете прецедентной практики Европейского суда по правам человека и выявить характеристики, характерные для его субъекта.

Результаты исследования темы могут способствовать решению проблем, связанных с квалификацией истязаний в правоприменительной практике, а также могут стать основой для совершенствования состава преступления инстязания, предусмотренного статьей 450 Уголовного кодекса РА, в контексте правовой определенности и, следовательно, повышения эффективности борьбы с ним.

Ключевые слова: пытки; сильная физическая боль; сильные психические страдания; должностные лица; специальные и обычные субъекты

[19] Статья была представлена 26.02.2024 и прошла рецензирование 19.03.2024.